

ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 50 ՏԱՐՈՒՄ
(1850—1900 ԹԹ.)

Հ. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Յարական կառավարության 1849 թ. հունիսի 9-ի հրամանագրով Անդրկովկասում կազմավորվեց նոր՝ Երևանի նահանգ, որի մեջ մտան Երևանի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի և Օրդուրադի գավառները¹:

Երևանի նահանգը ստեղծվեց Թիֆլիսի և Օսմախու նահանգների տարածքներից, այսպես. Թիֆլիսի նահանգի կազմից հանվեցին և Երևանի նահանգին միացվեցին Երևանի և Նախիջևանի գավառները, ինչպես նաև Ալեքսանդրապոլի գավառը (Լոռի-Փամբակով): Օսմախու նահանգից Երևանին անցավ Շուշու գավառի մի մասը, որը հետագայում միացավ Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառին²:

Նորաստեղծ նահանգը զբաղեցնում էր այժմյան Հայկական ԽՍՀ-ի Ծիրակ, Լոռի, Արագածոտն, Այրարատ, Գեղարքունիք, Վայոց ձոր պատմաազգագրական շրջանները, ինչպես նաև Իզդիրի շրջանը (այժմ՝ Թուրքիայում) և ներկայիս Նախիջևանի ԽՍՀ-ն ամբողջությամբ (այժմ՝ Ադրբեջանական ԽՍՀ-ում):

Նահանգի տարածքն ունեցել է 27,8 հազ. քառ. կմ մակերես, հյուսիսից և հյուսիս-արևելքից սահմանակից է եղել Թիֆլիսի նահանգին, արևելքից՝ Շուշու գավառին, հարավից՝ Պարսկաստանին, հարավ-արևմուտքից և արևմուտքից՝ Թուրքիային:

Նորաստեղծ նահանգի տարածքում կատարված բնակչության հաշվառումները մոտավոր են եղել, կապված որոշակի դժվարությունների հետ, քանի որ բնակչության մի մասը վաչկատուն կյանք է վարել, իսկ նստակյաց բնակչությունը հաճախ խուսափել է ճիշտ պատասխաններ տալուց: Եթե այս բոլորին ավելացնենք այդ հաշվառումների տևական լինելը, բնակչության տեղաշարժերի հաճախականությունը, ապա կարելի է դատել ստացված արդյունքների իսկության մասին³:

Նահանգի բնակչությունը, ըստ էթնո-դավանանքային կազմի, այսպիսի պատկեր է ունեցել՝ հայեր, ինչպես ամբողջ Հայաստանի, այնպես էլ նահանգի բնիկներն են եղել և զգալի թիվ են կազմել, տարածքը հսկ ժողովրդի բնօրրանն է, մահմեդականներ, որոնք ըստ դավանանքի բաժանվել են շիաների և սունիների: Թյուրքալեզու ցեղային միություններն անվանվել են «թաթարներ», իսկ մահմեդականների մյուս խումբը կազմել են քրդերը: Սույն մահմեդականներից (քուրդ-եզդիները նույնպես) ոմանք վարել են նստակյաց, ոմանք վաչկատուն կյանք: Թյուրքալեզու ցեղերը սելջուկ-թուրքերի անմիջական հետնորդներն էին, որոնք տարածվել են Հայաստանում սկսած 11-րդ դ.: Այդ ցեղերից առանձնացել են այրումի, սեդիլի, ախսախլի և թաշանլի վաչկատուն խմբերը, հատկապես մեծ տարածում են ունեցել Սուրմալուի և Սարդարաբադի տեղամասերում⁴:

Թրքական խմբի վաչկատուն մի քանի ցեղեր նահանգի տարածքն են անցել հարևան, այսպես կոչված, «թաթարական դիստանցիաներից», վրացական իշխանության օրոք և հատկապես 19-րդ դ. սկզբներին, երբ ռուսները գրավեցին Անդրկովկասը: Սրանք քոչել են Երե-

¹ А. П. Берже. Собрание материалов для составления исторического географического и статистического описания Кавказского и Закавказского края, Тифлис, 1858, с. 232.

² А. Шахатунян. Административный передел Закавказского края, Тифлис, 1918, с. 85.

³ Военно-статистическое обозрение Российской империи (ВСОРИ), т. XVI, ч. 6, с. 137.

⁴ Նույն տեղում, էջ 150—157:

վանի, Նոր Բայազետի, Նախիջևանի գավառներում և քաժանված են եղել երկու հիմնական ցեղի՝ չորսաքարեր և դարափափախներ: Մեկ այլ կենդանի ցեղը տարածված է եղել միայն Նախիջևանի գավառում:

Քրոյերն ապրել են նահանգի արևմտյան մասերում, իսկ քոչել են գրեթե ամբողջ տարածքում: Եզդի-քրոյերը կազմել են հասանի ցեղային միությունը և վաչկատուն կյանք են վարել Սուրմալուի տեղամասում, իսկ մի քանի ցեղախմբեր՝ Սարդարաքաղի տեղամասում (ընդամենը՝ 140 ընտանիք):

Ռուսները նահանգի տարածքում հիմնավորվեցին 19-րդ դ. 40-ական թթ. սկսած: Ռուսական հինգ գյուղից երկուսը գտնվել է Լոռիում, երկուսը՝ Համգաչիման գետի վերին հոսանքի շրջանում, իսկ մեկը՝ Գեղարքունիքում: Հույներն ապրել են Ալեքսանդրապոլի գավառի Բայանդուր գյուղում, գնչուները՝ Սուրմալուի, Ջանգիբասարի և Ծարուրի տեղամասերում, մասամբ՝ Նախիջևանի գավառում (մոտ 800 մարդ)⁵:

19-րդ դ. կեսերին Երևանի նահանգում անցկացված մարդահամարները ոչ միայն մտաւոր են եղել, այլև սկզբունքորեն տարբերվել են միմյանցից: Ըստ ռազմական պաշտոնական վիճակագրության, 1850 թ. Երևանի նահանգում եղել է 240 հազ. բնակիչ⁶, որից նստակյաց՝ 81 %, վաչկատուն՝ 9 %, վերջիններս անհամեմատ շատ են եղել Երևանի և Օրդուբադի գավառներում: Մեկ այլ պաշտոնական աղբյուրի հիմամբ նահանգի բնակչությունը 1851 թ. 294 հազ. ավելի է եղել⁷: Իսկ ահա «Կովկասյան օրացույցի» տվյալներն ավելի քազմաբնույթ են ու հավաստի: Հակված ենք կարծելու, որ ըստ դրա ներկայացվող արժեքները տվյալ ժամանակահատվածի համար ավելի ամբողջական են և ընդգրկում են բնակչության զբաղմունքի տարբեր ոլորտները: Ըստ այդ տվյալների, որոնք պարբերաբար հրատարակվել են Անդրկովկասի վիճակագրական կոմիտեի կողմից, 18-րդ դ. 50-ական թթ. Երևանի նահանգում ապրելիս է եղել 194534 տղ., 126411 կին, ընդ.՝ 256645 մարդ: Նահանգի գավառներից ամենաքազմամարդը եղել է Երևանինը՝ 107856 մարդ, իսկ սակավամարդը՝ Օրդուբադինը՝ 30221 մարդ⁸:

Բնակչության էթնիկ կազմը լիակատար ներկայացնել հնարավոր չէ, քանի որ ժամանակի աղբյուրներում թյուրքախելու և քրդական ցեղերը մեկ ընդհանուր՝ «մուսուլման» անվամբ են հանդես գալիս: Այդ իսկ պատճառով քազարարվեք էթնո-դավանանքային կազմն արտահայտող տվյալներով (ըստ գավառների): Երևանի գավառում հայերը կազմել են ընդհանրության 88 %-ը, մահմեդականները՝ 61 %, ռուսները՝ 1 %, Ալեքսանդրապոլի գավառում համապատասխանաբար՝ 93 %, 8 %, 1 %, Նախիջևանում՝ 35 % և 65 %, Նոր Բայազետում՝ 73 %, 23 % և 4 %, Օրդուբադում՝ 28 % և 72 %:

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք ամբողջ նահանգի հաշվով, կստանանք. հայեր՝ 58 տոկոս, մահմեդականներ՝ 46 տոկոս, ռուսներ՝ 1 տոկոս: Միացյալ ազգությունները (ասորիներ, հույներ և այլն) ամբողջ բնակչության չնչին տոկոսն են կազմել, ուստի և չեն առանձնացվել: Չնայած բնակչության քազարձակ ցուցանիշներն ըստ տարբեր աղբյուրների չեն համընկնում, այնուամենայնիվ, տոկոսային արժեքները քազական ճշգրիտ են: Հետաքրքիր է նշել, որ մահմեդական բնակչության 15 տոկոսը վաչկատուն կյանք է վարել, ըստ որում, քոչվոր քրդերի քանակը հասել է 6000-ի, իսկ թյուրքախելու քոչվորներինը՝ 13000-ի⁹: Ընդհանուր առմամբ վաչկատուն այս ցեղերը կազմել են նահանգի բնակչության ավելի քան յոթ տոկոսը:

Երևանի նահանգն ունեցել է հինգ քաղաք՝ 36390 բնակչությամբ (19057 տղ., 17833 կին): Քաղաքային բնակչությունը հասել է 14 տոկոսի, իսկ գյուղականը (119241 տղ., 107014 կին)՝ 220255 մարդ կամ 86 տոկոս: Գյուղերի թիվը նահանգում, ըստ հիշյալ աղբյուրների, անցել է 900-ից¹⁰, իսկ տների քանակը եղել է մոտ 45 հազ.: Նահանգի տարածքում կար նաև 190 քրդական ձմեռանոց: Բնակչության խտությունը մեկ քառ. կմ-ում՝ մոտ 10 մարդ, իսկ Ալեքսանդրապոլի գավառում, որն ամենախիտն էր՝ 14 մարդ:

Կովկասի օրացույցում արժեքավոր տվյալներ կան նահանգի բնակչության զբաղվածության վերաբերյալ, որ ներկայացված է երկրագործությամբ, առևտրով և արհեստներով ըզ-

⁵ Նույն տեղում, էջ 158—185:

⁶ Նույն տեղում, էջ 187—194:

⁷ *Девятая ревизия. Исследование о числе жителей в России в 1851 г.* П. Кепона, СПб, 1857, с. 155.

⁸ *Кавказский календарь на 1855 г.* (КК), Тифлис, 1854, с. 280—417.

⁹ Նույն տեղում:

¹⁰ Գյուղերի թիվը նույն ժամանակահատվածի տարբեր աղբյուրներում տարբեր է և տատանվում է 850—1000-ի միջև:

քաղվողների թիվը, ըստ որում հայ և մահմեդական բնակչությունն առանձնացված է ըստ դավանանքի: Ջրաղված բնակչության գերակշռող մասը (85 տոկոս) եղել է երկրագործ (որոշ հայեր՝ 85 տոկոս), մոտ 8 տոկոս առևտրականներ և 7 տոկոս արհեստավորներ, որոնցում էլ գերակշռող մաս են կազմել հայերը¹¹:

Այսպիսով, Երևանի նահանգի 19-րդ դ. 50-ական թթ. բնակչության ամփոփ նկարագիրը ներկայացնելիս տեսնում ենք, որ հիմնական բնակիչները հայերն ու թյուրքալեզու ժողովուրդներն են եղել, ըստ որում բնակչության կեսից ավելին՝ հայեր: Այդ շրջանի նահանգի բնակչության տեղաշարժերի և ընդհանրապես ժողովրդագրության մասին պատկերացում կազմելու համար դիմել ենք և 1847 և 1861 թթ. տվյալներին: Ըստ առաջինի ուսումնասիրվող տարածքում մահացությունների թիվը (15052 մարդ) 1,5 անգամ ավելի է եղել ծնունդից (5402 մարդ)¹²:

Տղամարդկանց մահացությունը 2,6 անգամ գերազանցել է կանանց, որը քացատրվում է ժամանակի բարդ ու հակասական իրափնակով: 1861 թ. բնակչության տեղաշարժերում երևում է հակասակ պատկերը՝ ծնունդների թիվը ավելի քան 1,8 անգամ գերազանցել է մահացությանը (17898 ծնունդ, 9694 մահ)¹³: Բնական աճը կազմել է 8204 մարդ, իսկ ամուսնությունների թիվն անցել է 4290-ից: Հատկանշական է, որ հայ բնակչությունը մեկ տարվա ընթացքում ունեցել է ամենաբարձր աճը՝ 6285 մարդ, մահմեդականները՝ 1831 մարդ, իսկ մնացյալը՝ 208 մարդ:

Այսպիսով, վերոգրյալ տվյալներից հետևում է, որ արդեն 19-րդ դ. կեսերից սկսած նահանգի բնակչությունն ունեցել է աճի դրական հաշվեկշիռ, որում որոշիչ տեղ է ունեցել բրնական աճը:

Հետագայում ևս, մինչև գյուղացիական ռեֆորմները (1870 թ.), նահանգի տարածքում կատարած հաշվառումները հաստատում են, որ 19-րդ դ. կեսերից սկսած բնակչությունն անընդմեջ աճել է հիմնականում բնական աճի հաշվին:

Սակայն, ըստ ուսուսական վիճակագրական աղյուսակների, 1858 թ. նահանգի տարածքում եղել է ընդամենը 280 հազ. բնակիչ¹⁴, որն, ըստ իս, անհավանական է, հենց թեկուզ այն պատճառով, որ արդեն 1862 թ. նահանգում, մի քանի աղբյուրների տվյալների հիմամբ, կար 421 հազ. մարդ¹⁵: Մեր նախնական հաշվարկներով 1858 թ. նահանգի բնակչության թիվը 900 հազարից պակաս չպետք է լիներ:

Ըստ 1862 թ. տվյալների, նահանգի բնակչության 54 տոկոսը եղել է հայ, 49 տոկոսը՝ մահմեդական, մնացյալ 3 տոկոսը՝ ասորի, հույն և այլք: Նահանգում եղել է հինգ քաղաք, 1108 գյուղ, ինչպես նաև 33 քրդական վաչկատուն համայնք: Գյուղական բնակչությունը գերակշռել է՝ ավելի քան 80 տոկոս:

Հարկ է նշել, որ 1862 թ. Երևանի նահանգում կատարվեց վարչական փոփոխություն. Ալեքսանդրապոլի գավառի կազմից հանվեց ու Թիֆլիսի նահանգին միացվեց Լոռին¹⁶:

Երևանի նահանգի բնակչությանը վերաբերող քավարար տվյալներ կան 19-րդ դ. 80-ական թթ. գրավոր աղբյուրներում, այս առումով, թերևս, ուշագրավ են 1865 թ. տվյալները¹⁷:

Հետաքրքիր է, որ նահանգի բնակչության հաշվառում կատարողներից Ի. Ստեբնիցկին հայտնում է, որ մարդահամարներն ավելի դյուրին էին քրիստոնյա բնակչության շրջանում, դժվար՝ մահմեդականների մեջ, ըստ այդմ էլ վիճակագրական տվյալներն առաջինների համար քավարար են, իսկ երկրորդների համար՝ շատ մոտավոր: Այսուհանդերձ, հեղինակի քերած տվյալներից իմացվում է, որ նահանգին վերաբերող արժեքները լիովին քավարարում են ներկայացվող պահանջները¹⁸: Բայց 1865 թ. քացահայտող հիշյալ աղբյուրները մեկ այլ լուրջ թերացում ևս ունեն: Այսպես, հայտնի է, որ 1849 թ. հետո Երևանի նահանգում հաջորդ կարևոր վարչաբնաստարածքային փոփոխությունները տեղի ունեցան 1867 թ., սակայն արդեն 1855 թ. հինգ գավառի փոխարեն ներկայացվել էր վեցը, այսինքն՝ առանձին էր սղր-

¹¹ Նույն տեղում:

¹² Сборник материалов для описания Тифлисской губернии, т. I, вып. I, Тифлис, 1870, с. 64.

¹³ Сборник материалов о Кавказском крае (СМКК), Б. м. и г., с. 324.

¹⁴ Статистические таблицы Российской империи. Вып. 2, СПб. 1863, с. 177.

¹⁵ КК на 1865, Тифлис, 1864, с. 122—126, «Кавказ», № 56, 58, Тифлис, 1863.

¹⁶ Ա. Պ. Օհանյան, Վարչա-տեղիտորիալ բաժանումները նախախորհրդային Հայաստանում, «Երևանի պետ. համալսարանի գիտ. աշխ.», հ. 51, պր. 2, 1955, էջ 87:

¹⁷ Сборник статистических сведений о Кавказе (СССК), т. I, Тифлис, 1869, с. 5—57; СМКК, с. 436, КК на 1867, Тифлис, 1866, с. 312—313.

¹⁸ КК на 1867, Тифлис, 1866, с. 315.

վել էջմիածնի գավառը, իսկ իրականում 1867 թ. նահանգի գավառների մեջ հետևյալ փոփոխություններն էին արվել՝ Օրդուբադի գավառը միացվել էր Նախիջևանի գավառին, իսկ Երևանի գավառի մի մասից կազմավորվել էր էջմիածնի գավառը, որից հետո Երևանի նահանգն ունեցավ հետևյալ հինգ գավառը՝ Երևանի, էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Նոր Բալազետի և Նախիջևանի¹⁹:

Ներկայացվող թվային ցուցանիշները, ըստ 1865 թ. վարչաքննատարածքային բաժանման, այսպիսի պատկեր են տալիս՝ նահանգի հինգ քաղաքում և 1115 գյուղերում (416 հայկական, 606 մահմեդական, 83 խաղը և 10 ռուսական) բնակվելիս է եղել 237888 տղ., 199851 կին, ընդ.՝ 437719 մարդ²⁰: Բնակչությունը տեղաբաշխելով ըստ գավառների, կստանանք Երևանի գավառում՝ 104,6 հազ. տղ., 91 հազ. կին, ընդ.՝ 195,6 հազար մարդ, Ալեքսանդրապոլի գավառում՝ 42,2 հազ. տղ., 38,7 հազ. կին, ընդ.՝ 80,9 հազ. մարդ, Նոր Բալազետի գավառում՝ 43,8 հազ. տղ., 31,5 հազ. կին, ընդ.՝ 75,4 հազ. մարդ, Նախիջևանի գավառում՝ 28,6 հազ. տղ., 24 հազ. կին, ընդ.՝ 52,7 հազ. մարդ, Օրդուբադի գավառում՝ 18,4 հազ. տղ., 14,5 հազ. կին, ընդ.՝ 32,9 հազ. մարդ:

Գծվար չէ նկատել, որ ամենաբազմամարդը Երևանի գավառն է եղել, սակայն բնակչության խտությամբ (1 քառ. կմ-ում 19 մարդ), նա զիջել է Ալեքսանդրապոլի գավառին՝ 21 մարդ: Նահանգի բնակչության միջին խտությունը՝ 16 մարդ:

Երևանի նահանգի բնակչության էթնիկ կազմը բավականին խալտաբղետ է եղել²¹, դարձյալ գերակշռել են հայերը և թյուրքալեզու բնակչությունը, որոնք միասին կազմել են նահանգի ամբողջ բնակչության 92,5 տոկոսը, որից հայեր՝ 55 տոկոս: Երևանի նահանգի սակավաթիվ ազգություններից վաչկատուն քրդերը կազմել են բնակչության 4,2 տոկոսը, քուրդ-եզդիները՝ 1 տոկոս, ասորիները՝ 1,3 տոկոս, ռուսները՝ 0,9 տոկոս, հույները՝ 0,2 տոկոս: Նահանգի քաղաքային բնակչությունը (25140 տղ., 20588 կին, ընդ.՝ 45728 մարդ) գրեթե 13 տոկոս է եղել, գյուղականը (212728 տղ., 179263 կին, ընդ.՝ 391991 մարդ)՝ 87 տոկոս: Ամենահայաշատ քաղաքները եղել են Ալեքսանդրապոլը և Նոր Բալազետը: Երևանում հայերը բնակչության 41 տոկոսն են կազմել: Գավառներից հայաշատը նույնպես Ալեքսանդրապոլին է եղել՝ 91 տոկոս:

Հաջորդ ժամանակաշրջանը նահանգի բնակչության վիճակագրության վերաբերյալ 1867 թ. է²²: Ըստ այդ տվյալների, նահանգում ապրել է 445016 մարդ (242015 տղ., 203001 կին), քաղաքային բնակչությունը՝ 10 տոկոս, գյուղականը՝ 90 տոկոս: Բնակչության աճի մասին պատկերացում կազմելու համար դիմենք թվերին²³: 1867 թ. նահանգում գրանցվել էր 5414 ամուսնություն, ծնունդների թիվը՝ 7853 տղ., 6809 կին, ընդ.՝ 14662 մարդ, մահացությունների թիվը՝ 5444 տղ., 5042 կին, ընդ.՝ 10486 մարդ, այսինքն՝ բնական աճը կազմել է 4176 մարդ: Ընդամենը մեկ տարի անց աճն արդեն հասել է 4397 մարդու²⁴: Ինչպես տեսնում ենք, նահանգի բնակչությունը 80-ական թթ. անընդհատ աճել է:

Այժմ համառոտակի ներկայացնենք բնակչության թվային այն արժեքները, որոնք վերաբերում են 1870 թ., որից հետո կամփոփենք բնակչության շարժընթացը 20-ամյա ժամանակահատվածում:

Երևանի նահանգում 1870 թ. բնակվելիս է եղել 458540 մարդ²⁵, որից, ըստ դավանանքի, հայ լուսավորչական՝ 252,7 հազ. մարդ, հայ կաթոլիկ՝ 3,6 հազ., մահմեդական՝ 181,7 հազ., ուղղափառ՝ 6,6 հազ., ռուս աղանդավոր՝ 3,9 հազ., ասորի՝ 4,6 հազ., հրեա և լեհ՝ 0,1 հազ.: Հայերը կազմել են բնակչության ավելի քան 56,5 տոկոսը, իսկ մահմեդականները՝ 40 տոկոսը:

Քաղաքային բնակչությունը նախորդ շրջանի համեմատ նվազել էր՝ 12 տոկոս, գյուղականը՝ 88 տոկոս: Նահանգի բնակչության 95,4 տոկոսը նստակյաց է եղել, 4,6 տոկոսը՝ վաչկատուն: Վերջիններս քոչել են Երևանի և էջմիածնի գավառների տարածքներում, մասամբ նաև Ալեքսանդրապոլի գավառում: Բնակչության խտությունը նահանգում 16 մարդուց փոքր-ինչ ավել է:

Այսպիսով, Երևանի նահանգի բնակչության 20-ամյա աճը 256,6 հազ.-ից հասել է

¹⁹ Տե՛ս Ա. Պ. Օհանյան, նշվ. աշխ., էջ 88, А. Шахатуриян, նշվ. աշխ., էջ 85:

²⁰ СССР, с. 5.

²¹ Նույն տեղում:

²² КК на 1870, Тифлис, 1869, с. 398.

²³ Статистический вѣстник Российской империи (СВРИ), серия 2, вып. 8, СПб, 1872, с. 3.

²⁴ КК на 1870, Тифлис, 1869, с. 408—409.

²⁵ СВРИ, серия 2, вып. 10, СПб, 1875, с. 73, 80—83; Сборник сведений о Кавказе (ССК), т. I, Тифлис, 1871, с. 352—352, ССК, т. 2, Тифлис, 1872, с. 191.

458,5 հազ -ի կամ անել է 196,9 հազ. մարդով: Հայ բնակչության տեսակարար կշիռն ամբողջ բնակչության հաշվով 58 տոկոսից հասել է 58,5 տոկոսի, իսկ անհա թաղաքային բնակչությունը նվազել է՝ 14 տոկոսից հասել 12 տոկոսի, բնակչության խտությունը 9 մարդուց հասել է 16-ի: Ի տարբերություն հայ բնակչության տեսակարար կշիռի աճի, նկատելի է մահմեդական բնակչության նվազում՝ 48 տոկոսից 40 տոկոս, որը բացատրվում է այդ բնակչության շրջանում միգրացիոն բարձր արդյունքներով, կախված նրանց տնտեսական վնասվածությունից կացութաձևից:

Ամերսոնսոններն ներկայացնելով 19-րդ դ. 50—70-ական թթ. նահանգի բնակչությանը վերաբերող արժեքները (գրականության մեջ դեռևս պատշաճ ուշադրության չի արժանացել Ռիչլայ ժամանակահատվածը ոչ միայն Երևանի նահանգի, այլ Արևելյան Հայաստանի բնատարածքի մասշտաբով), համառոտակի վերլուծության ենթարկենք 19-րդ դ. երկրորդ կեսի բնակչության վիճակագրությունը: Նշենք, որ այս ժամանակին վերաբերող տվյալներն ամենամետ լավ են լուսարանված գրականության մեջ, ուստի մեր նպատակն է ընդհանուր գծերով ներկայացնել բնակչության շարժընթացին, էթնիկ կազմի փոփոխություններին ու տեղաշարժերին վերաբերող հարցերը:

19-րդ դ. 70-ական թթ. սկզբներին (1878 թ.) Կովկասի ամբողջ բնատարածքում, ընդ որում նաև Երևանի նահանգում, կատարվել են բնակավայրերի և բնակչության հաշվառումներ, որոնք նախորդներից տարբերվել են համեմատաբար հաստատուն արժեքներով: Նախքան 1878 թ. վիճակագրությանն անցնելը, ներկայացնենք այն վարչաբնատարածքային փոփոխությունները, որոնք կատարվեցին 1872 թ. նահանգի տարածքում: Հետ այդ փոփոխությունների²⁶, որոնք Հայաստանում տեղի ունեցած վերջին փոփոխություններն էին ցարական կառավարության օրոք, Երևանի նահանգի հինգ գավառից վերակազմվեց յոթը: Այսպես. Էջմիածնի գավառից անջատվեց (նրանից հարավ, Արաքսի աջ ափին) Սուրմալուի գավառը, իսկ Նախիջևանի գավառի հյուսիսային մասից կազմավորվեց Ծարուր-Դարալագյազի գավառը: Այսպիսով, Երևանի նահանգը 1872 թ. ուներ հետևյալ գավառները՝ 1. Երևանի, 2. Էջմիածնի, 3. Ալեքսանդրապոլի, 4. Նոր Բայազետի, 5. Նախիջևանի, 6. Սուրմալուի, 7. Ծարուր-Դարալագյազի: Երևանի նահանգի 1365 գյուղերի 71,7 հազ. տներում ապրել են 293897 տղ., 253796 կին, ընդ.՝ 547693 բնակիչ²⁷: Էթնիկ կազմն այսպիսի պատկեր է ներկայացնում. հայեր՝ 298,7 հազ. մարդ կամ բնակչության 54,6 տոկոս, թյուրքալեզու ժողովուրդներ կամ, ինչպես գրականության մեջ է, «թաթարներ»՝ 218,9 հազ. մարդ կամ 39 տոկոս, մյուս ազգություններից. քրդեր՝ 28,1 հազ. մարդ (այդ թվում՝ եզդի քրդեր՝ 7,7 հազ. մարդ կամ 5,1 տոկոս): Քրդերի քանակը մեծ էր Սուրմալուի, Երևանի և Էջմիածնի գավառներում (85,4 տոկոս)²⁸: Ռուսները (4,5 հազ.) կազմել են 0,8 տոկոս, ասորիները (1,2 հազ.)՝ 0,2 տոկոս, հույները (1,1 հազ.)՝ 0,2 տոկոս, հրեաները, գերմանացիները, վրացիները և լեհերը միասին՝ ընդ. 0,1 տոկոս²⁹:

Նահանգի տարածքում վաչկատուն բնակչության քանակը եղել է 20,5 հազ. (3,7 տոկոս), որի կեսից ավելին բաժին է ընկել Սուրմալուի գավառին (52 տոկոս), այնուհետև Էջմիածնի (27 տոկոս), Երևանի (20 տոկոս) և Ծարուր-Դարալագյազի (1 տոկոս) գավառներին³⁰:

Բնակչության միջին խտությունը մեկ քառ. կմ-ում արդեն հասել է 20 մարդու: Ամենախիտ բնակեցվածը եղել է Երևանի գավառը՝ 31 մարդ: Նահանգի հինգ թաղաքում բնակվել է 48957 մարդ, որը նախորդ շրջանի հետ համեմատած նվազ էր 4,6 հազ. մարդով կամ կազմում էր բնակչության ընդամենը 9 տոկոսը, իսկ գյուղական բնակչությունը (498,7 հազ. մարդ) աճել էր և կազմել 91 տոկոսը: Նահանգի մեծ թաղաքը եղել է Ալեքսանդրապոլը (19976 մարդ), որտեղ բնակվելիս է եղել թաղաքային բնակչության ավելի քան 40 տոկոսը, այն նաև հայաշատ թաղաքներից էր՝ 96 տոկոս (Նոր Բայազետում՝ 100 տոկոս):

1873 թ. Երևանի նահանգի բնակչության սոցիալ-տնտեսական և էթնոգրաֆիկա-բնակչության հարցերի բավականին մանրամասն վերլուծությունը տրված է Անդրկովկասի գյուղական

²⁶ Տե՛ս Ա. Չ. Յոսեֆան, Գշվ. աշխ., էջ 85, А. Шахатунян, Գշվ. աշխ., էջ 85:

²⁷ ССР, т. IV, Тифлис, 1878, с. XIV, 112—115, ССР, т. V, ч. I, Тифлис, 1879, Б. с. ССР, т. VII, Тифлис, 1880, с. XVIII, КК на 1878, Тифлис, 1877, с. 323.

²⁸ С. А. Егизарова, Краткий этнографический очерк курдов Эриванской губернии, Тифлис, 184, с. 13—15.

²⁹ ССР, т. VII, с. XVIII; КК на 1881, Тифлис, 1880, с. 24.

³⁰ Свод материалов для изучения экономического быта государственных крестьян Закавказского края (СМЭБГКЗК), т. III, ч. 2, Тифлис, 1888, с. 82.

բնակչության անտեսական կտուցը ներկայացնող արձեղանքի ժողովածուների մեջ³¹, որտեղից էլ կրթվենք բնակչության անց արտանայտող ցուցանիշները: Հարցնի է, որ նախագի բնակչության վիճակագրությանը գրավորները վեր են հանել լիարժեք պետական գյուղացիության հետ կապված հարցերը, սակայն բերված տվյալները լիարժեք բնակչության անց տեսակերի մասին կարծիք կազմելու համար: Ամբողջ նախագում, ըստ ազգությունների, բնակչության անց հետևյալ տեսակն է ունեցել³². հայեր՝ 4235 տուն, 13802 կին, 21934 կին, ան՝ 35736 մարդ, բյուրջաբեղտ բնակչություն՝ 1189 տուն, 3445 տղ., 8714 կին, ան՝ 17159 մարդ, քրդեր՝ 170 տուն, 807 տղ., 900 կին, ան՝ 1807 մարդ, ռուսներ՝ 98 տուն, 321 տղ., 267 կին, ան՝ 588 մարդ, ասորիներ՝ 6 տուն, 83 տղ., 29 կին, ան՝ 112 մարդ, հույներ՝ 1 տուն, 32 տղ., 17 կին, ան՝ 49 մարդ, իսկ ամբողջ նախագում՝ 5699 տուն, 39490 տղ., 31761 կին, ան՝ 55251 մարդ: Տոկոսային հարաբերությանը բնակչության անց ըստ սեռի այսպիսի տեսք է ունեցել. տղամարդիկ՝ 20,5 տոկոս, կանայք՝ 23,5 տոկոս: Բնակչության անց տեսակերով հայերն ավելի բարձր են եղել (ամբողջ անց 64,7 տոկոս): Կանանց անց ավելի բարձր է եղել, քան տղամարդկանցը, որը, ըստ իս, բացատրվում է տղամարդկանց մեծ տեղաշարժերով՝ կապված հողային նեղվածությանն ու նոր աշխատանք փնտրելու հետ: Հողային ռեֆորմը (1870 թ.) փաստորեն գյուղացիներին չազատեց կախյալ վիճակից, որի պատճառով էլ այդ շրջանում մեծ հոսք է նկատվում դեպի Անդրկովկասի արդյունաբերական կենտրոններ:

Հետագա 10—18 տարիների ընթացքում (մինչև 1886 թ. մարդահամարը) բնակչության էրնիկ կազմի ու թվաքանակի մեջ մեծ փոփոխություններ չեն կատարվել, իսկ բնակչության հաշվարկներ սակավ են եղել, այն էլ շատ մոտավոր, նույնիսկ՝ ոչ ճիշտ³³: Համեմայն դեպս, հույնիկ եղած սակավաթիվ տվյալները ցույց են տալիս, որ 1881—1884 թթ. նախագի բնակչությունն անել է 20910 մարդով, կամ տարեկան անը կազմել է 6790 մարդ³⁴:

Հետաքրքիր է, որ նախագի վաչկատուն բնակչությունը 1878—1885 թթ. ոչ միայն չի անել, այլև զգալիորեն նվազել է³⁵: Երևանի, Սուրմալուի, Էջմիածնի, Ծարուր-Ռարալազյազի գավառներում ավելի քան 11 տարվա ընթացքում այդ բնակչությունը նվազել է՝ տների քանակը՝ 278-ով, տղամարդիկ՝ 687-ով, կանայք՝ 781-ով, ընդ.՝ 1418 մարդով կամ 24,8 տոկոսով:

19-րդ դ. վերջերը, նախորդների համեմատ, բնակչության վիճակագրության մեջ հիշարժան են այն առումով, որ տվյալներն ավելի մանրամասն են: 1886 թ. մարդահամարի³⁶ կամ, ինչպես անվանում են, «ընտանիքների ցուցակների» տվյալները վերաբերում են ոչ թե առկա բնակչությանը, այլ միայն տեղաբնիկներին, այսինքն՝ այդ ցուցակներում տեղ չեն գտել ժամանակավոր բնակիչները³⁷: Ըստ այդմ Երևանի նախագում եղել է 90918 ընտանիք (ծուխ), որոնցում ապրել է 361627 տղ., 808778 կին, ընդ.՝ 670405 մարդ³⁸, որից հայեր՝ 56 տոկոս, թաթարներ՝ 37,44 (սկսած 19-րդ դ. 80-ական թթ., գրականության մեջ թուրքալեզու ժողովուրդները հաճախ էին գալիս նաև «արդրեջանական թաթարներ» անվամբ), քրդեր՝ 5,44 տոկոս, ռուսներ՝ 0,62 տոկոս, մնացյալը (ասորիներ, հույներ, մորդվաններ³⁹, հրեաներ, լեհեր, վրացիներ, գնչուներ, գերմանացիներ)՝ 0,5 տոկոս:

Ալեքսանդրապոլի նախագում ամենից հայաշատն է եղել՝ 91,7 տոկոս, արդրեջանիները շատ են եղել Ծարուր-Ռարալազյազում՝ 70,5 տոկոս, ամենից քիչ՝ Ալեքսանդրապոլի գա-

³¹ Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края (МИЭБГКЗК). т. I—VII; СПб, 1885—86 гг.

³² МИЭБГКЗК, т. I, ч. 1, с. 6—7, 305—308, 531—533, 654—655, т. III, ч. 1, с. 10—11, 234—236; ч. 2, с. 458; т. IV, ч. 2, с. 5—8, 99—101.

³³ Ս. Էլիանի «Историческая записка об управлении Кавказом» աշխատանքում (թ. 2, Թիֆլիս, 1907, էջ 808) Երևանի նախագում վերաբերող արձեղանքը ոչ թե 1881 թվականին են վերաբերում, այլ՝ 1878 թ. (547—698 թն.):

³⁴ КК на 1883, Тифлис, 1882, с. 224; КК на 1884, Тифлис, 1883, с. 291, 353; КК на 1885, Тифлис, 1884, с. 231.

³⁵ СММИЭБГКЗК, т. III, ч. 2, Тифлис, 1888, 82.

³⁶ Свод статистических данных о населении Закавказского края извлеченных из посемейных списков 1886 (ССДНЗКИПС), Тифлис, 1893.

³⁷ Краткий очерк экономического положения Кавказ по новейшим официальным и другим отчетам, Тифлис, 1888, с. 83.

³⁸ ССДНЗКИПС, 1886, Тифлис, 1893, Б. с., КК на 1891, Тифлис, 1890, Приложение, с. 2; КК на 1898, Тифлис, 1897, с. 50.

³⁹ Մինչև 80-ական թթ. մորդվանները ներկայացվել են որպես ռուսներ:

վառում՝ 4 տոկոս: Նահանգի քաղաքային բնակչության մեջ (5 քաղաք, 10269 ընտանիք, 30252 տղ., 27842 կին, ընդ.՝ 57594 բն.) հայերը գերակշռություն են ունեցել՝ 69,4 տոկոս, իսկ աղրքեջանական թաթարները՝ 29 տոկոս: Չնայած քաղաքային բնակչության բացարձակ թվի աճին՝ 8657 մարդ (1873 թ. համեմատ), այն կազմել է ամբողջ բնակչության միայն 8,8 տոկոսը (նվազել է 0,4 տոկոսով): Հակված ենք ենթադրելու, որ դրա պատճառ կարող էր լինել այն, որ մինչև 19-րդ դ. 70-ական թթ. բնակչության հաշվառումները (հատկապես քաղաքային, որտեղ ժամանակավոր բնակչությունը շատ էր) ներառել են առկա ամբողջ բնակչությունը, իսկ հետագայի՝ 1873 և 1886 թթ., մարդահամարներն ընդգրկել են միայն տեղաբնիկներին:

Նահանգի ամենամեծ քաղաքը դարձյալ Ալեքսանդրապոլն էր (24,2 հազ. մարդ), որտեղ հայերը գերակշռող են եղել (94,7 տոկոս), իսկ Երևանում (14,7 հազ.) հայ և թյուրքալեզու բնակչության քանակը գրեթե հավասարվել էր (համապատասխանաբար՝ 48,5 տոկոս և 49 տոկոս): Նահանգի բնակչության միջին խտությունը 1 քառ. կմ-ում՝ 24 մարդ, նախորդ շրջանում՝ 20 մարդ: Ամենից խիտ բնակեցված է եղել Երևանի գավառը՝ 86,4 մարդ, ամենից ճուրճ՝ Նախիջևանի գավառի՝ 16,4 մարդ: Սեռային կազմով քաղաքային բնակչության շրջանում 100 տղամարդուն ընկել է 90,4 կին, իսկ գյուղական բնակչության մեջ՝ 84,9 կին, ամբողջ նահանգում՝ 85 կին⁴⁰:

1886 և 1873 թթ. տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ նահանգի բնակչությունն ավելացել էր 122712 մարդով կամ ավելի քան 18 տոկոսով, որից քաղաքային բնակչությունը՝ 17 տոկոսով:

Հետագա տարիներին Երևանի նահանգի բնակչությունը շարունակել է ավելանալ հիմնականում ի հաշիվ բնական աճի, մեխանիկական աճի մեջ բաժին է ունեցել նաև թյուրքական շարդարարների հայախալած քաղաքականության հետևանքով 19-րդ դ. 90-ական թթ. սկսած արևմտահայերի զանգվածային գաղթը նահանգի տարածք: Մուշի և Վանի գավառներից Երևանի նահանգ են գաղթել շարդերից փրկված բազմաթիվ հայ ընտանիքներ⁴¹:

Մինչև առաջին համառուսական մարդահամարն ընկած ժամանակահատվածը Երևանի նահանգի բնակչության փոփոխություններն արտահայտվել են հետևյալ թվերով. 1892 թ. նահանգում առկա բնակչությունը հասել է 705,5 հազ. մարդու: Բնակչությունը տեղաբաշխված է եղել հինգ քաղաքներում և 1801 գյուղերում⁴²: Նույն ժամանակի երկու աղբյուրներում թերի են լուսաբանված նահանգի բնակչության թվային արժեքները: Ներկայացված աղյուսակներում բնակչության թիվն ըստ դավանանքի 671,2 հազ. է, իսկ ըստ ազգության՝ 604,8 հազ.⁴³: Չարմանալի է, որ նահանգի բնակչության գրեթե բոլոր բնագավառները ներկայացնող «Памятная книжка» արժեքավոր աշխատությունը բնակչության ազգային կազմը տալիս նահանգում գերակշռող է համարել, այսպես կոչված, «աղրքեջանական թաթարներին»⁴⁴, սա լուրջ վրիպում է: Ներկայացված թվերը ցույց են տալիս հակասակը՝ իր կազմավորման օրից մինչև կազմալուծումը նահանգի բնակչության գերակշռող մասը եղել են հայերը:

Բնական աճի տեմպերի մասին պատկերացում կազմելու համար քաղական է ներկայացնել նահանգի 1894 թ. բնակչության տեղաշարժերը: Նահանգում արձանագրվել է 6886 ամուսնություն, 29392 ծնունդ և 17871 մահացություն, ընդամենը աճը՝ 11721 մարդ⁴⁵: Համեմատության համար նշենք, որ 1890 թ. աճը կազմել է 9180 մարդ⁴⁶:

19-րդ դ. բնակչության վիճակագրությունների մեջ 1897 թ. առաջին համառուսական մարդահամարը հիրավի երևույթ էր: Այն իր տեսակի մեջ միակն էր ռուսական իրականու-

⁴⁰ Сборник статистических сведений по Закавказскому краю (СССЗК), ч. I, Тифлис, 1902, с. 18—21.

⁴¹ Կ. Զ. Քաղաքային, Արևմտահայ գաղթականությունը և նրա վիճակը 19-րդ դ. 90-ական թթ. վերջերին և 20-րդ դ. սկզբներին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1974, № 8, էջ 171:

⁴² Памятная книжка Эриванской губернии (ПКЭГ) на 1892, Эривань, 1892, с. 108.

⁴³ П. П. Надеждин. Кавказский край, природа и люди. Тула, 1901, с. 243—245; Е. Кондратенко. Этнографические карты губерний и областей Закавказского края, Б. м. и г., с. 1—2.

⁴⁴ ПКЭГ на 1892, с. 109.

⁴⁵ Записки Кавказского отдела императорского русского географического общества (ЗКОИРГО), кн. XVIII, Тифлис, 1896, с. 362.

⁴⁶ ПКЭГ на 1892, Эривань, 8182, с. 109.

թյան մեջ ոչ միայն արժեքների ճշգրտությամբ, այլև բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակի բազմակողմանի հավաստի արտացոլմամբ: Մարդահամարի արդյունքները վերամշակվել ու հրատարակվել են 1905 թ.: Ըստ այդ մարդահամարի տվյալների, Երևանի նահանգի բնատարածքում բնակվել է 829556 մարդ (441889 տղ., 387666 կին)⁴⁷: Ամենից թաղամասերը եղել է Ալեքսանդրապոլի գավառը՝ 165,5 հազ. մարդ, նույնպես է եղել Ծարուր-Դարալագյազը՝ 78,5 հազ. մարդ: Նահանգի բնակչության էթնիկ կազմը ներկայացնելու համար (որին չի անդրադարձել մարդահամարը) օգտվել ենք մայրենի լեզվի տրվյալներն արտացոլող աղյուսակից⁴⁸, ըստ որի նահանգի բնակչության կեսից ավելին եղել են հայերը՝ 53,16 տոկոս, ապա արրեջանական թաթարները՝ 37,8 տոկոս, այնուհետև քրդերը՝ 5,9 տոկոս, ռուսները՝ 1,9 տոկոս, ասորիները՝ 0,3 տոկոս, այլք: Նահանգի հիմնական բնակչությունը, ըստ գավառների, տեղաբաշխված է եղել այսպես. Երևանի գավառում՝ 38,5 տոկոս հայ, 51,3 տոկոս արրեջանական թաթարներ, Ալեքսանդրապոլի գավառում՝ համապատասխանաբար՝ 85,5 տոկոս և 4,7 տոկոս, Նախիջևանի գավառում՝ 84,4 տոկոս և 63,7 տոկոս, Նոր Բայազետի գավառում՝ 66,3 տոկոս և 28,3 տոկոս, Սուրմալուի գավառում՝ 31,2 տոկոս և 46,5 տոկոս, Ծարուր-Դարալագյազում՝ 27 տոկոս և 67,4 տոկոս, Էջմիածնի գավառում՝ 62,4 տոկոս և 28,9 տոկոս:

Նահանգի հինգ քաղաքներում և երեք ավաններում ապրել են 54141 տղ., 38182 կին, ընդ.՝ 92323 բնակիչ, որը կազմում է ամբողջ բնակչության 11 տոկոսը, գյուղական բնակչությունը (387748 տղ., 349485 կին, ընդ.՝ 737233 մարդ)՝ 89 տոկոս: Նահանգում տղամարդիկ ավելի են եղել կանանցից 54222 մարդով կամ ավելի քան 12 տոկոսով: 1897 թ. նահանգում ծնվել է 29,3 հազ. (3,9 տոկոս), մահացել՝ 14,8 հազ. մարդ (2 տոկոս)⁴⁹:

Բնակչության անման տեմպերը հնգամյա ժամանակահատվածում (1894—1898 թթ.) ունի հետևյալ պատկերը. նահանգում արձանագրվել է 28071 ամուսնություն, ծնվել է 150000 մարդ, մահացել՝ 82502-ը, բնական աճը կազմել է 67440 մարդ: Միջին տարեկան աճը կազմել է 13488 մարդ (5614 ամուսնություն, 30000 ծնունդ, 16500 մահ)⁵⁰:

Երևանի նահանգում բնակչության խտությունը մեկ քառ. կմ-ում հավասար է եղել 30 մարդու, Երևանի և Ալեքսանդրապոլի գավառներն ամենից խտարնակներն են եղել, համապատասխանաբար՝ 48,4 և 43,5 մարդ, նույնպես էր Նոր Բայազետի գավառը՝ 20,1 մարդ (նշենք, որ միայն Սևանա լճի մակերեսը գրավել է գավառի բնատարածքի երրորդ մասը):

Այսպիսով, ամփոփելով Երևանի նահանգի բնակչության գրեթե 50-ամյա աճի տեմպերը և էթնիկ կազմի փոփոխությունները, կարելի է հանգել հետևյալին.

1. Ուսումնասիրվող ժամանակահատվածում Երևանի նահանգի բնակչության աճը նկատելի է՝ հատկապես բնական տեղաշարժերի հաշվին, այսպես. 19-րդ դ. 50-ական թթ. 256,6 հազ. բնակչի դիմաց դարավերջին ունենք 829,5 հազ., աճը՝ 572,9 հազ. մարդ կամ 69 տոկոս, իսկ տարեկան աճը՝ 11,5 հազ. մարդ:

2. Քաղաքային բնակչությունն աճել է 55,9 հազարով (տարեկան՝ 1,1 հազ.), գյուղականը՝ 516,9 հազարով կամ ավելի քան 70 տոկոսով:

3. Տղամարդ բնակչության ընդհանուր աճը հավասար է 307,3 հազ., իսկ կանանցը՝ 261,2 հազ., տարեկան միջինը համապատասխանաբար՝ 6,1 և 5,2 հազ.:

4. Նահանգի բնակչության էթնիկ փոփոխությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված ժամանակահատվածում հայ բնակչության աճի տեմպերը զգալի բարձր են եղել՝ 305,7 հազ. կամ տարեկան ավելի քան 6,1 հազ. մարդ, իսկ արրեջանական թաթարներիը՝ 194,9 հազ. կամ 3,5 հազ. մարդ: Սակավաքանակ բնակչության մեջ աճի բարձր տեմպեր են ունեցել ռուսները՝ ավելի քան 80 տոկոս, քրդերը, ասորիներն ու հույներն աճել են ավելի քան երկու անգամ:

Ներկայացված քարտեզը ընդհանուր պատկերացում է տալիս 19-րդ դ. վերջին Երևանի նահանգի բնակչության էթնիկ կազմի, տեղաբաշխման և վարչաքննատարածքային բաժանման, ինչպես նաև՝ ըստ գավառների բնակչության շարժընթացի մասին:

⁴⁷ Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г. (ЦВПНРИ), СПб, 1905, кн. LXXI, с. X.

⁴⁸ СССРК, ч. I, Тифлис, 1902, с. 34—37.

⁴⁹ СССРК, ч. I, Тифлис, 1892, с. 34—37.

⁵⁰ КК на 1899, Тифлис, 1898, с. 48.